չէին օգտվում հարկաւոր հմտութեամբ, որի պատճառով և վերջին ժամանակներն են միայն սկսել ընդունել մեծամեծ չափեր, (որոնք) հաւանականաբար, ոչ հեռու ապագայում կաճեն աւելի եւս։ Այն ժամանակից սկսած, երբ վերացրին մենավաճառութեան եղանակը, գանձարանի արդիւնքը սկսեց աճել իւրաքանչիւր աճուրդի հետ. այսպէս՝ 1880 թ. մինչեւ 1885 թ. միջոցում տարեկան վճարը 29 գետային և լճային ձկնորսատեղիներից հասնում էր 298,857 ր 1885—1891 թ. միջոցում արդէն 757,793 ր. իսկ ներկայ տարուայ սկզբում եղած աճուրդին 14 ձկնորսատեղիներից միայն ստացուել է 967,258 ր։ Ընդ ամենը 1891 թ. ստացուել է գետային և լճային ձկնորսատեղիներից 1,003,151 ր. 69 կոպ., 20,310 ր. էլ ստացուել է ծովային ձկնորսութիւնից։ Արգելուած ժամանակի համար նշանակուած հսկողութեան դէմ ոչ մի փոփոխութիւն տեղի չի ունեցել, համեմատելով նախընթաց տարուց հետ։

Ձկնորսութեան մասին ստացած վիճակագրական տեղեկութիւնները շատ հեռու են ճշմարտութիւնից. ձկնորսութեամբ պարապողների ներկայացրած թուանշանները, առանց որ և է կարծիքի, պակաս են իսկականից որովհետեւ երկիւղ կրելով աճուրդի բարձրացնելուց, նոքա աշխատում են միշտ ցոյց տալ գործը ոչ այնքան ձեռնտու, որքան է նա իսկապէս, բայց որովհետեւ Գանձարանի շահերը պահանջում են ունենալ աւելի ճիշտ տեղեկութիւններ ձկնորսութեան մասին, ինչպէս և արդիւնքի, անհրաժեշտ է հիմնել մաքսատուն—արգելարաններ Կասպեան ծովափում, որտեղից ճանապարհվում են ձկնի բեռները ծովով, նոյնպէս և երկաթուղու այն կայարաններում, որ ստանում են ձուկը ուղղակի ձկնորսատեղիներից երկաթուղով ուղարկելու, որոնք կը հաղորդէին ձկնորսատեղիների վարչութեան իւրաքանչիւր ամիս տեղեկութիւններ ուղարկուող բեռների քանակութեան, նոցա պարունակութեան, իւրաքանչիւր բեռան կշռի և ուղարկողի անուան մասին, որպիսի միջոցներ մեծապէս նպաստած կլինէին ստանալու աւելի հաւաստի և ճշգրիտ տեղեկութիւններ այս մասին։ Ձկնորսատեղիների կապալառուների տուած տեղեկութիւնների հա-